

Թեան՝ օրավարձէն, քանի որ Կիրակի օրերը քաղաքէն յատուկ քահանայ մը պաշտամունքի կու գար, հազարամեայ սօսիին ներքեւ եւ կը կարդար, շարական ու սաղմոս, տպաւորիչ ու վեհ պարզութեամբ, սա դժբախտ հոգիներուն մէջ գոնէ ժամուան մը համար շինելով իրենց գեղը, անոր աղքատուկ եկեղեցին, մայրը, կինը, զաւակները ու մարդկային գերագոյն յուզումները, որոնք նոյնն են ամէն կուրծքի տակ: Պէյը, պապենական հրամանի մը յարգանքով, արարողութեան յատկացուած ժամանակը կը բաշխէր, վստահ ըլլալով սակայն կորուստին դարմանումէն, քանի որ հոգիով կազդուրուած բանուորները այդ օրը աւելի էին իրենց արդիւնքով: Տակաւին փոքր առաւելութիւններ, ծեծի ու հայհոյանքի պակաս, մա՛նաւանդ հայ-քրիստոնեայի համար բարգաւաճում՝ պատճառներ էին, որ վերի գաւառներու հայ բանուորները վախճային մերժուելէն:

Ընկեր Մաթիկը, ծանօթ այս պայմաններուն, հետաքրքիր աչքերով կը դիտէր պէյը, որ զինքը գաւազանով զատեց դէպի ձախ, փոքր խմբակ մը, իրեն նման տկար, պակասաւոր արարածներէ կազմուած: Զախլիկն ու քիչիկ մը կաղացողը, աչքէն աւրուածն ու ականջէն ծանրը անիկա կը զատէր մէկ ականարկով: Այս քննութիւնը, ջուրով գրաստային բան մը ունէր իր մէջը, զոր Մաթիկին ընկերները հեռու էին զգալէ: Երկու ժամուան մէջ այս քննութիւնը կ'ընտրէր կարաւանին լաւագոյն ուժերը: Զատուածնե՞րը: Անոնք, յատուկ մարդով ուղարկուէին քաղաք, հայոց Աղքատախնամին, որուն ժառանգական ատենապետն էր պէյը: Քանի մը օր անհրաժեշտ դարման, հանգիստ ու սնունդ ճամբէ տկարացածներուն մեծ մասը կ'ընէին քարի պէս առողջ: Ու ազգին դրամովը իրենք զիրենք շտկած՝ կը դառնային ագարակ, օրհնելով մեծահամբաւ ընտանիքը իր եօթը պորտը մինչեւ, Նիւ Եորքէն Մանչեսթրը ու Պոլիս:

Ընկեր Մաթիկը: Անշուշտ: Ամէնէն առաջ ա՛ն: Բայց ոչ ագարակ: Հայոց եկեղեցիին մէջ անիկա հանդի-